

Հաստատում է

Դպրոց



09. 2022թ

Մ. Տրիգորյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

5-րդ, 6-րդ դասարաններ

<< Նոնաձորի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

2022 -2023 ուստարի

Դասղեկ՝ Ասյա Կնյազյան

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն >> ՊՈԱԿ

/Կրճատումներով/

42. Դասարանի ղեկավարը /ղասղեկը/

ա. դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ.

բ. ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.

գ. անհրաժեշտության դուպրում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

դ. իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրենությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

ե. կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաններ, շրջագայություններ, տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը.

զ. հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոններն կոպտորեն խախտած սովորողի հարցը.

է. արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջությանը, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

ա. անվճար ստանալ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ /լրիվ / ընդհանուր կրթություն.

բ. անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման ձևը.

գ. անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.

դ. հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.

ե. ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները.

զ. առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո ծնողների /որդեգրողների կամ հոգաբարձուի / համաձայնությամբ, թողնելու ուսումը:

74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնությամբ, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:

75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

76. Սովորողը պարտանոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու

արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանված կարգով կարող է հեռացվել հաստատությունից:

78. Մտղն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական
ուղղությունները

1. Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը /

5-րդ, 6-րդ համակարգի դասարանը բաղկացած է 2 աշակերտից:

Դասարանում աշակերտների հարաբերությունները փոխադարձ օգնության, փոխըմբռնման և համերաշխության հիմքի վրա են: Աշակերտները հոգատար են միմյանց և դպրոցական գույքի հանդեպ: Ենթարկվում են դպրոցի կարգ ու կանոնին, կարգապահ են, մասնակցում են դպրոցական բոլոր միջոցառումներին: Պերագանց առաջադիմություն ունեցող աշակերտ դասարանում չկա: Դժվար դաստիարակվող աշակերտ
ևս:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները
ուստարվա ընթացքում

2022-2023 ուստարում նախատեսվել է անցկացնել շաբաթական մեկ օր դասղեկի ժամ: Յուրաքանչյուր դասղեկի ժամ անցկացնել այնպես, որ երեխաների մոտ ձևավորվի աշխատասիրություն, հարգանք մեծերի նկատմամբ և հայրենասիրություն: Կազմակերպել քննարկումներ, անցկացնել տեսաֆիլմերի դիտում: Կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն երեխաների ճանաչողական ընդունակությունների զարգացմանը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Ուստարվա ընթացքում առաջնային ուշադրություն դարձնել աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության խնդիրներին: Երեխաներին հնարավորություն տալ ծանոթանալու իրենց հոգևոր և կրոնական ժառանգությանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ապահովել ազգային և համաշխարհային մշակույթի ընկալումն ու յուրացումը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ապագա քաղաքացի, լավ զինվոր դաստիարակելու կարևոր խնդիրներից մեկն է: Աշխատել աշակերտներին դաստիարակել հայրենասիրական ոգով, նրանց մեջ սերմանել հայրենասիրություն:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտներին գաղափար տալ ֆիզիկական դաստիարակության դերի և կարևորության մասին: Այն նպատակ ունի ամրապնդել մարդկանց առողջությունը, մղել նրանց հասնել առավելագույն արդյունքների և պարզևների սպորտում:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Մեր դաստիարակել աշխատանքի և աշխատավոր մարդու հանդեպ: Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի աշխատանքի կարևորությունը, ցանկացած աշխատանք կատարի սիրով:

3.6 Քննապահպանական դաստիարակչություն

Ներկայացնել բնության կարևորագույն դերն ու նշանակությունը յուրաքանչյուր մարդու կյանքում: Քննարկել քննապահպանական արդի խնդիրները, գտնել դրանց լուծման ճանապարհները, անհրաժեշտության դեպքում դիմել ղեկավարների օգնությանը: Միշտ մարուր պահել բնությունը:

3.7 Դպրոց-ընդանիք կապը

Ծանոթանալ ընտանիքի սոցիալ-տնտեսական և բարոյական վիճակին: Անցկացնել ծնողական ժողովներ, ծնողներին տեղեկացնել աշակերտների վարքի և առաջադիմության մասին: Կազմակերպել հանդիպումներ ծնողների և դասավանդող մյուս ուսուցիչների հետ: Ամուր պահել դպրոց-ընդանիք կապը:

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների հիմնական

բովանդակությունը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Գիտելիքի օր Մտողական ժողով Սեպտեմբերի 21-ը անկախության օր		դասղեկ, աշակերտներ
2	Անկախության տոն Իմ իրավունքներն ու պարտականությունները		աշակերտներ
3	Զրույց “Դպրոցն իմ տունն է” Կարգապահական հարցեր		աշակերտներ
4	“Պատերազմը չարիք է” “Ուժը միասնության մեջ է” Գրադարանից օգտվելու կանոններ		դասղեկ, աշակերտներ
5	Պետական խորհրդանիշներ Ճանաչենք մեր հայրենիքը Զրույց “Իմ հայրենիքը”		դասղեկ
6	Մենք ենք, մեր սահմանները “Ազնվություն և ճշմարտացիություն” Զրույց “Իմ ծննդավայրը”		դասղեկ
7	Մաքրությունն առողջության երաշխիք Էկոլոգիական հիմնախնդիր		դասղեկ
8	Եկեղեցին և ազգը Իմ առօրյան		դասղեկ
9	Երկրաշարժ Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից		դասղեկ
10	Զրույց ընկերության, ընկերասիրության մասին Ճիշտ սովելու կանոններ		դասղեկ, աշակերտներ

11	Իմ վարքը տանը և շրջապատում Լավ է, երբ լավ գործեր եւ կատարում Ամանոր		աշակերտներ
12	Ո՞ր գրական հերոսին կուզեի նմանվել Ճերմակ ձմեռ		դասղեկ
13	Ես եմ տերը իմ երկրի Հայաստանն իմ տունն է		աշակերտներ
14	Իմ հզոր բանակ Ես զինվորն եմ իմ երկրի 1-ին կիսամյակի ամփոփում Մոտրական ժողով		աշակերտներ
15	Առաջին օգնություն Ազատ ստեղծագործական ժամ		աշակերտներ
16	Կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակներ Մեր երազանքները Զրույց “Տյառնընդառաջ”		դասղեկ
17	Վնասակար սովորություններ Գիրք նվիրելու օր Մայրենիի տոն		դասղեկ
18	Վարվեցողության կանոններ Բույսերի խնամքը ձմռանը		դասղեկ աշակերտներ
19	Քաղպաշտպանության օր Մայրության և գեղեցկության տոն		դասղեկ
20	Զրույց “Իմ Մայրիկը” Մեծերը և փոքրերը		դասղեկ
21	“Ես բնության բարեկամն եմ” Բնության զարթոնք		դասղեկ, աշակերտներ
22	Անձնական հիգիենա Զրույց “Օաղկազարդ”		
23	Գարունը մեր բակում Զրույց “Զատիկ” Գարնանային գրոսանք		

24	Շարաթվա ընթացքում անել դասալսումներ: Արդյունքները քննարկել դասղեկի ժամին:		դասղեկ
25	Սիրենք և պահպանենք մեր միջավայրը Մաքուր շրջակայք:		
26	Բջջային հեռախոսի դրական և բացասական կողմերը Օգտակար խորհուրդներ		դասղեկ, աշակերտներ
27	Հայոց ցեղասպանությունը: Թշնամու նունձգությունը 2020-2022թթ.-ին: Հիշատակի մոմավառություն		դասղեկ
28	Քաղաքավարություն և բարեկրթություն Զրույց “Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն”		դասղեկ
29	Հաղթանակների մայիս Արիությունը ծնվում է պայքարում Զրույց հայ հերոսների մասին		դասղեկ
30	Կատար դասալսումներ:Արդյունքները քննարկել դասղեկի ժամին		դասղեկ
31	Ինչպես եմ ուզում կազմակերպել իմ հանգիստը, զրույց քննարկում		դասղեկ
32	Երեխաների պաշտպանության միջազգային օր		դասղեկ
33	Անոան հմայքները		դասղեկ
34.	Մտողական ժողով: 2-րդ կիսամյակի ամփոփում		դասղեկ

Անվանում	հայրենագիտ			աշխարհ.											
	ստացավ	վարձավճար	հանձնեց	ստացավ	վարձավճար	հանձնեց	ստացավ	վարձավճար	հանձնեց	ստացավ	վարձավճար	հանձնեց	ստացավ	վարձավճար	հանձնեց
5-րդ դասարան															
1															
6-րդ դասարան															
1															

Ծնողական ժողովներ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ժողովի համառոտ բովանդակությունը	ծանոթություն

Աշխատանքներ ծնողկոմիտեի հետ

Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝ _____

անդամներ՝ _____

Աշխատանք ծնողկոմիտեի հետ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն

